Արձանագրություն 2

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 21.02.2018թ. ժամը 14:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Ա. Համբարձումյան – ՀՀ ՖՆ աշխատակազմի պետական պարտքի կառավարման վարչության ռազմավարության և ռիսկերի կառավարման բաժնի պետ ԳՊ/ԳԱՊ

Անդամներ

Ա. Եգանյան – ՀՀ ՖՆ աշխատակազմի պետական պարտքի կառավարման վարչության գանձապետական պահառուի աշխատանքների կազմակերպման բաժնի պետ ԳՊ/ԳԱ

Գ. Վարդապետյան- ՀՀ ՖՆ աշխատակազմի պետական պարտքի կառավարման վարչության ռազմավարության և ռիսկերի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ ԳՊ/ԳԱ

Ա. Գրիգորյան – ՀՀ ՖՆ ԳԿՎ սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ ԳՊ/ԲԱ

Մ. Միքաելյան – ՀՀ ՖՆ աշխատակազմի ԳԿՎ վարչատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ ԳՊ/ԲԱ

Գնումները համակարգող

Լ.Սահակյան՝ ՀՀ ՖՆ ԳԿՎ գնումների գործընթացի կազմակերպման բաժնի առաջատար մասնագետ

<u>Տեղեկություններ հայտերի բացման մասին</u>

Հայտերը բացվել են <u>www.armeps.am</u> կայքի միջոցով՝ հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող 7-րդ օրը, ժամը 14:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ – 0:

1. **<u>Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին</u>**

1.1 ՀՀ ֆինանսների նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/10» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը	Տվյալները
«Պանարմենիան Մեդիա Գրուպ» ՓԲԸ	ՀՎՀՀ 00067992, հասցե՝ ք. Երևան, Եղվարդի խճ. 1 էլ հասցե info@pamg.am
«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ	ՀՎՀՀ 01541435, հասցե՝ ք. Երևան, Ալեք Մանուկյան 5, էլ.հասցե. info@armradio.am

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին

Հանձնաժողովը ընդունեց ի գիտություն, որ «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ կողմից ներկայացված հավելված 2.1-ը թերի է. բացակայում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված մասնակցի անձը հաստատող տվյալները/անուն, ազգանուն, անձնագրի տվյալներ/ և առաջարկած գինը գերազանցում է առկա ֆինանսական միջոցները:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Ծանուցել «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ին 1 /մեկ/ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/10 ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից առաջարկած գները ներկայացվում են հավելված 1-ում.

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝ «Պանարմենիան Մեդիա Գրուպ» ՓԲԸ-ին:

2. Հարցում կատարել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «Պանարմենիան Մեդիա Գրուպ» ՓԲԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ – 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը

ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/10 ծածկագրով ընթացակարգի գնահատման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել մասնակցի կողմից փաստաթղթերի ներկայացման և եզրակացության ներկայացման օրվանից հետո ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ – 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա. Համբարձումյան

հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա. Եգանյան

_____ Գ. Վարդապետյան

_____ Ա. Գրիգորյան

_____ Մ. Միքաելյան

Գնումները համակարգող՝ _____ Լ.Սահակյան

Հավելված 1

Հ/Հ	ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պայմանագրի կատարման համար առաջարկվող գները (ՀՀ դրամ)					
		«Պանարմենիան Մեդիա Գրուպ» ՓԲԸ			«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ		
		Արժեք	ԱԱՀ	Առաջարկված գին	Արժեք	ԱԱՀ	Առաջարկված գին
1	հայտարարությունների պատրաստման և ռադիոյով եթեր հեռարձակման ծառայությունների ձեռքբերման **/նախահաշվային գինը՝ 4620000/**	**3600000**	**720000**	**4320000**	**7700000**	**1540000**	**9240000**